


355.4
f-85



16

ԿՈՐԻՐ ԲԱՆԱԿՑԻՒՄ
ԳՐԱԴԱՐԱՆ



Գ. ԻՎԱՆՈՎ

ՔՈՂԱՐԿՈՒՄԸ ՄԱՐՏՈՒՄ

355.4

հ-85

ՅԵՐԵՎԱՆ
1930

129 APR 2013

ԿԱՅԱ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԹԻՒՆ, ՄԻԱՅԵ՞Ք

ՀԽՍՍ

555-4

ի-85 5

Դ. ԻՎԱՆՈՎ

Ա

ՔՈՂԱՐԿՈՒՄԸ ՄԱՐՏՈՒՄ

ՀԱՅԱ. ԴԻՎ. ՔԱԲՂԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



1930

15242-57

Դ. ԽՎԱՆՈՎ: «Քողարկումը մարտում»: Գրքույշ-
կում պատմվում ե այն մասին, թե ինչ բան է քող-
արկումը, ինչպես նա ոգնում է մարտիկին և ինչ-
պես նա հնարավորություն է տալիս խուսափել ան-
տեղի կրուստներից: Լրիվ հասկացողության սահ-
նալու համար այն մասին, թե ինչպես ողտագործել
մարտում տեղանքի բոլոր միջոցները, լավ կ'լինի
կարգալ նույնպես ը. Սպիրինդի «Հետվակի խրամա-
տափորումը կրակի տակ», և ը. Շիլբախի «Ի՞նչպես
ողտագործել մարտում տեղական առարկաները»
զբքույկները:

8 Ա Ն Կ

Եջ

Ինչի համար և քողարկումը	3
Ուժից են մարտիկները քողարկում	7
Քողարկումը հետախուզության մեջ	14
Քողարկումը հանգստում և պահես- տում կանգնած ժամանակ	24
Քողարկումը լերթում մարտ դուրս գալուց առաջ	26
Քողարկումը հարձակողական մարտում	28
Քողարկումը պաշտպանողական մարտում	50
Հրետանու քողարկումը	62
Զրահավոր ուժերի և ինքնաթիւների քողարկումը	68
Թիկունքի քողարկումը	70
Պահպանիր ուղմական գաղտնիքը	73
Ցեղակացություն	75

ԽՆԴԻ ՀԱՄԱՐ Ե ԳՈՂԱՐԿՈՒՄԸ

Հեշտ ե կովել այն թշնամու հետ, վորի մա-
սին շատ բան դիտես: Գիտես, թե վիրքան ե
նրա մարտիկների, գնդացրերի, հրանոթների. թի-
վը, ինչ ե մտածում նա անելու; յերբ ե նա
աջակցություն ստանալու: Այդ տեսակ թշնամին
վոչ մի գեպքում մեզ հանկարծակիի չի բերիլ:
Յերբ ել, վոր նա մտածի հարձակվել մեզ
վրա, նա միշտ ել կհանդիպի պատրաստի դիմա-
գրության: Բնդիակառակը, ով վոչինչ չգիտե հա-
կառակորդի մասին, նա կովում ե կապված աշ-
քերով: Այդպիսի մարտիկները միշտ ել իրենց
անհոգությամբ խալուառակվում են:

Սակայն իմանալ թե ինչ ե կատարվում թշնա-
մու մասում, այնքան ել հեշտ չե: Վորոշ բան
կարելի յէ իմանալ տեղական բնակիչներից. մի
քանի տեղեկություններ ել հաղորդում են հա-
կառակորդի տեղափորությունն ուղարկված գաղտ-
նի գործակալները: Ամենից շատ իմանում են
հենց իրեն՝ հակառակորդի գործերի դիմողությու-
նից: Զորքերի գիտողությունը կարևոր ե ելի այն
պատճառով, վոր մարտում անհրաժեշտ ե իմանալ

վոչ միայն թշնամու մասին, այլև վոր ամեն մեկն
անձամբ տեսնի նրան: Միայն այն հակառակորդի
վրա կարելի է կրակել, վորը լավ է երեսում ե:
Դրա համար անհրաժեշտ ե մշտական դիտողու-
թյուն թշնամու վրա: Բայց թշնամին ել քնած չե:
Մենք դիտում ենք նրան, նա դիտում ե մեզ:
Մարտում հազարավոր թշնամական աչքեր հե-
տեսում են մեր մարտիկներին: Հետեւում են հա-
սարակ աչքով, հետեւում են յերկդիտակներով և
դիտակներով, հետեւում են ողապարփկներից և ինք-
նաթիռներից: Այդ դիտողությունը կատարվում ե
անդադար թե ցերեկը և թե գիշերը, ամեն տե-
սակ յեղանակին: Մարտիկը հաճախ չգիտե այն
մասին, վոր իրեն դիտում ե հակառակորդը: Ոդա-
պարփկնու ինքնաթիռը մարտիկը տեսնում ե, հա-
կառակորդի վերերկրյա դիտողին շատ դժվարենկա-
տել: Նա իր դիտողությունը կատարում է լավ ծածկ-
ված տեղից: Հարկավոր ե ընդմիջտ, հաստատուն
հիշել, վոր հակառակորդը նույնպիսի անընդհատ դի-
տողություն ե կատարում, ինչպիսին մենք ինքներս
ենք կատարում: Հակառակորդը վորքան ավելի վոր ե
ե բան իմանա մեր զորքերի մասին, այնքան հեշտու-
թյամբ նա կկռվի: Այդ բավական չե: Ներկայումս
դնդացրալին և հրետանական կրակը շատ դիտուկ
և ուժեղ է գարձել: Այն բոլորը, ինչ վոր հա-
կառակորդը մարտում տեսնում ե, կարող ե

վոչնչացնել իր կրակով: Այդ պատճառով թշ-
նամուց պետք ե թագցնել այն ամենն ինչ վոր
հնարավոր ե: Դրա հետ միասին պետք ե խարել
թշնամուն: Յեթե մենք կամենում ենք հարձակ-
վել, պետք ե լուր տարածել, վոր չպետք ե հար-
ձակվենք: Այստեղ, վորակեղ կանգնած են մեր
հրանոթները, պետք ե թաքցնել նրանք թշնա-
մուց: Իսկ այստեղ, վորակեղ նրանցից չկան,
պետք ե պատրաստել կեղծ հրանոթները: Մարտի-
կին պետք ե հազցնել այնպիսի հագուստ, վորը
նրան հակառակորդի համար ըիչ տեսանելի կը
դարձնի: Մի խոսքով, պետք ե վոչ միայն ծած-
կել, այլ և խարել թշնամուն: Իսկ յեթե հաջողվի
թշնամուն խարել, հեշտ կլինի նրան ջարդելը:
Թշնամուն այլպես խարեն և նրանից մեր գոր-
քերը թագցնելը կոչվում է քողարկում: Քողար-
կումը—մարտիկի համար նոր բառ ե: Սուաշին
անգամ այդ բառը լսում ե բանակում: Շատերը
քողարկումը սխալ են հասկանում, կարծելով վոր
քողարկել—նշանակում ե միայն ծածկվել, թաք-
նովել թշնամուց: Բայց իրոք այդ այլպես չե:
Քողարկվել—միայն չի նշանակում թաքնվել: Կա-
րսելի լե թաքնվել թփերում, անտառում, խորը
փոսում, խրճիթում: Բայց այդ տեսակ թաքնվե-
լուց ըիչ ոգուտ կլինի: Վերցնենք որինակ՝ մար-
տիկին իննդիլ ե տրված հարձակվել թշնամու

վրա. իսկ նա վեր կկենա և կթաքնվի թափ անտառում, վորտեղ թշնամին նույնիսկ չի յերևում: Նստելով անտառում, մարտիկը թշնամու զիտողությունից շատ լավ ծածկված կլինի: Բայց այդպես թաքնվելն անարժեք է, վորովհետև մարտիկը չի կատարում իրեն հանձնարարված խնդիրը — հարձակվել թշնամու վրա: Այդպիսի թագնվելը վոչ միայն ոգտավետ չե, այլև հսկայական վնաս և բերում մարտիկի: մարտական խնդրին: Ամենից առաջ պետք է իրազործել իր սարտական խնդիրը, վորում յեվ պիտի ոգնի բողարկումը:

Որինակ՝ մարտիկները պետք ե հարձակման վնասն ձյան վրայով: Մարտիկները հագնում են սպիտակ խալաթներ, վորոնք ծածկում են նրանց թշնամուց: Խալաթն ոգնում ե մարտիկների կատարել իր մարտական խնդիրը: Մարտիկների այդ տեսակ ծածկվելն ե միայն կոչվում քողարկում:

Քողարկվել կարելի իւ զանազան կերպ, ոգարվելով տարբեր ոժանդակ միջոցներից:

Մարտիկը մարտում որինակ՝ ծածկում ե իրեն խոտով, ծղնոտով, ճյուղերով: Այդ տեսակ քողարկումը չի պահանջում վոչ մի տեսակ հատուկ քողարկման նյութեր: Այդպես քողարկվել կարող ե ցանկացած ժամանակ ամեն մի մարտիկ: Ուստի և նա կոչվում ե բնական բողարկում: Կարելի իւ քողարկվել և այլ կերպ: Մարտիկը հագնում ե

քողարկման խալաթներ կամ հատուկ քողարկման հագուստներ: Նրանց պատրաստման համար հարկավոր են զանազան նյութեղեն, ներկեր, կտորեղեն, կեղեաթելեր (մաշալկա), պարաններ: Բայց լինում են և շատ բարդ կառուցվածքներ, վորոնք պահանջում են հատուկ քողարկման նյութեղեններ, գործիքներ և պարագայք: Այդ տեսակ քողարկումը, վորուեղ կիրառվում ե ամեն տեսակ քողարկող տեխնիկա: Կոչվում ե Տեխնիֆական բողարկում: Տեխնիֆական քողարկումը պահանջում ե հատուկ նյութեղեն, զիտություն և վարժություն:

Մարտիկների գործն ե — կարողանալ լավ կիրառել ընական քողարկումը: Տեխնիֆական քողարկման հետ մարտիկը պետք ե ընդհանուր ծանոթություն ունենա: Մնացածում նրան կողնեն մասնագետները — սակրավոր — քողարկողները:

ՈՒՄԻ՞Ց ԵՆ ՔՈՂԱՐԿՎՈՒՄ ՄԱՐՏԻԿՆԵՐԸ

Քողարկվելուց տուաջ պետք ե խմանալ ով եքեղ զիտում: Հակառակորդը կարող ե զիտել թե գեանի վրայից և թե ողից: Տարբեր զիտողությունը տարբեր ել քողարկում կունենա: Քանի զեռ զորքերը ճակատից հեռու յեն, նրանց կարող են հետեւել միայն հակառակորդի գործակալները: Ճակատին մոտիկ սկսում են յերեալ թշնամու

ինքնաթիոները։ Ճակատից կես որպա ճանապարհ
դենը թշնամին գիտում ե մեր մարտիկներին կա-
պովի (պարանավոր) ողապարիկից (այսպես կոչ-
ված «լերշիկից»)։ Ավելի մոտիկից—գետնից հա-
կառակորդը դիտում ե հասարակ աչքով, լերկ-
դիտակներով և դիտակներով։

Վորքան մարտիկը մոտ ե ճակատին, այնքան
հակառակորդն աչքով ավելի լե դիտում նրան։
Դիտում են զործակալները, ողից դիտողները,
վերերկրյա դիտողները։ Իսկ թշնամին վորքան
շատ դիտողներ ունենա, այնքան դժվար կլինի
քողարկվելը։

Հակառակորդի դիտողների մեծ մասն իլ դի-
տողությունը կատարում ե գետնից (վերերկրյա
դիտողություն)։ Դիտում են վոչ միայն հետա-
խուզողներն և դիտողները։ Յուրաքանչյուր մար-
տիկ պարտավոր ե հետեւ հակառակորդին։ Մար-
տիկներից նրանց, վորոնց դիտելու ինդիրներ են
հանձնված, արվում են լեկդիտակներ։ Յերկդի-
տակը մի զործիք ե, վորի մեջ նայելով կարելի
լե առարկաների հեռավորությունը 6—10 անգամ
մոտեցնել, քան թե նրանք իրոք կան։ Յենթա-
դրենք, մարտիկը գտնվում ե հակառակորդից 6
կիլոմետր տարածության վրա։ Շատ մարտիկներ
դիտում են արագես, հակառակորդը մեզնից հե-
ռու լե, լես նրան չեմ տեսնում, նշանակում ե

և նա ինձ չի տեսնում։ Այսպես կարող ե մտա-
ծել միայն նա, վորը հասկացողություն չունի
յերկդիտակի մասին։ Յերկդիտակով մարտիկը,
մինչև վորը 6 կիլոմետր ե, կտեսնի այնպես,
կարծես մինչև իր մոտ ընդամենը 1 կիլոմետր ե
և ավելի պակաս։ Իսկ մենք գիտենք, վոր 1 կի-
լոմետրից ավելի մոտիկ մարտիկը բավական լավ
տեսնում ե։

Բացի յերկդիտակից գոյություն ունի դիտո-
ղական գործիքների մի շարք, վորը տեսանելի
առարկաները մոտեցնում ե շատ ավելի անգամ։
Ուստի վոչ մի րոպե չի կարելի մոռանալ այն
մասին, վոր հակառակորդը դիտում ե վոչ թե
հասարակ աչքով, այլ յերկդիտակով և այլ զոր-
ծիքներով։ Յուրաքանչյուրն իր փորձից դի-
տե այն մասին, վոր կանգնելով գետնի վրա, հե-
ռուն չի ակնի։ Պետք ե բարձր տեղեր ընտրել։
Դիտողները բարձրանում են բարձր տների կը-
տուրները, ծառերը, զանգակատները։ Դիտողը
վորքան ավելի լե բարձրանում, այնքան նա հե-
ռու լե տեսնում։ Նա պարանավոր ողապարիկով
վերե ել ե բարձրանում։ Պարանավոր (կապովի)
ողապարիկը սովորաբար իր արտաքին տեսքի հա-
մար կոչում են «լերշիկ»։ Նա բարձրանում ե ճո-
պանով (պարան) շատ բարձր, իր զամբյուրում
ունենալով դիտողներ։ 800 մետր բարձրության

վրա պարանավոր ողապարիկից տեսնվում են մարդկանց խմբեր, գումակներ, մարտկոցներ 8—10 կիլոմետրի վրա, բայց անհատ մարդիկ նկատելը համարյա անհնար է։ Ուժեղ քամին, անձրևն և մառախուզը խանգարում են դիտողությանն ողապարիկից։ Գիշեր ժամանակ ողապարիկից նկատելի յեն միայն կը ակները։

Ողից դիտելը (ողավին դիտողություն) կատարվում են նույնակես և ինքնաթիւներից։ Ինքնաթիւնից ծածկվելն ավելի դժվար է, քան պարանավոր ողապարիկից։ Ինքնաթիւը թոշում և վոչ միայն մարտադաշտի վրա։ Նա մտնում է հակառակորդի թիկունքը մինչև տասնյակ և հարցուրավոր վերստեր։ Ինքնաթիւից տեսանելի յեն բոլոր կողմերն ուղին տարածության վրա, ինչ վոր ողապարիկից։ Ամպանած, քամի յեղանակը միքիչ խանգարում ե ինքնաթիւից դիտողությանը։ Ինքնաթիւը չի կարող հանկարծակի յերկալ, Յերկինքը լավ դիտելով մարտիկները միշտ ել հսկավորություն կունենան ծածկվել։ Պետք է հիշել այն մասին, վոր ինքնաթիւը վոչ միայն դիտում, այլ և հարձակվում է։ Ինքնաթիւից զորքերի մեջ նետում են ոռոմբեր և կը ակում են գնդացրից։ Մարտում ինքնաթիւը վնասում ե մարտկոցները, խրամանաերի դասավորությունն և դիտում է հակառակորդի ոժանդակության մո-

տեսնալը, Մանր առարկաներն ինքնաթիւից, ինչպես և ողապարիկից, դժվար է դիտել։ Սակայն այն լուսանկարներում, վոր ինքնաթիւներն են նկարում, գուրս և գալիս այն, վորը հասարակ աչքով չես տեսնի։ Հակառակորդը դիտում է իր տեսածից բացի և այլ բաներ։ Նա կարող է, որինակ գիշերը մեզ չտեսնել, բայց լսել։ Գիշեր ժամանակ լավ լսվում է անկվների ճողոցը, շատ մարդկանց (բազմության) շարժումը, մետաղյա մտսերի ձայնը։ Առանձին գործիքներով մարտկոցի ձիգերի ձայնից վորոշում են այն տեղը, վորտեղ գտնվում է նա։ Դրա համար ել միշտ պետք է միջոցներ ձեռք առնել ավելորդ աղմուկի դեմ։ Դա հատկապես շատ կարևոր է գիշերային լերթերի, հետախուզության և մարտի ժամանակ։ Քողարկումը ծածկում է մարտիկներին վոչ միայն հակառակորդի աշխերից, այլ յեփ նրա ականջ դնելուց։ Այս բոլորով հակառակորդի դիտողությունը չի վերջանում։ Հակառակորդն իր գործակալներին ուղարկում է մեր զորքերի տեղափորությունը։ Տեղական բնակչության մեջ կան մարդիկ, վորոնք համակրում են հակառակորդին։ Նոքա կարող են վորոշ բաներ պատմել մեր զորքերի մասին։ Մարտիկը շատ զգուշ պետք է լինի, հատկապես ուղմական գաղանիքները պահելում։ Մենք տեսնում ենք, թե ինչպես հակառակորդի

բազմաթիվ աչքեր դիտում են մարտիկներին մարտում: Դիտում են գետնից, դիտում են յերկնքից: Այս դիտողություններից վհրն ե ավելի վտանգավոր: Ո՞ւմից պետք ե առաջին հերթին քողաքոր: Այս հարցին միևնույն պատասխանը տալ չի կարելի մարտական պարագայի բոլոր գեպերում: Որինակ մեր հրանոթները կանգնած են թշնամու վերերկրային դիտողությունից ծածկված տեղում: Հակառակորդը նրանց յերկրից նըկատել չի կարող: Այդ դեպքում ավելի մեծ վընաս կարող ե պատճառել թշնամու ոգային դիտողությունը: Ուրիշ գեպք: հետևակը հարձակվում է իր ջոկով թշնամու վրա: Հակառակորդի ինքնաթիռները վատ են տեսնում մարտիկներին, ընդհակառակը հակառակորդի վերերկրյա դիտող ները լավ տեսնում են յուրաքանչյուր մարդուն: Նոքա նրան վոչ միայն տեսնում են, այլ և կրակում են նրա վրա: Այս դեպքում, ի հարկ ե, մարտիկի համար հակառակորդի վերերկրյա դիտողությունը վտանգավոր ե:

Մարտիկը միշտ ինքը պետք ե փորոշի, թե ումից առաջին հերթին մարտում քողարկվել: Ասենք՝ սկզբում քողարկվել ե վերերկրյա դիտողությունից, ապա իսկուն պետք ե քողարկվել ուղային դիտողությունից և ընդհակառակը: Մարտիկին միայն այն ժամանակ կարելի լի քողարկ-

ված հաշվել, յերբ նո ամբողջովին թաքնված ե վերերկրյա և ողալին դիտողությունից:

Տարբեր դիտողությունների քողարկումն ել տարբեր ե լինում: Սակայն բանը միայն դիտողությունների մեջ չե: Ծատ բան կախումն ունի տարբա ժամանակից, որվանից և յեղանակից: Որինակ՝ ձմեռը պետք ե ձյան գույնի սպիտակ հագուստ հագնել, գիշերը մնալ ցած տեղերում: Եթիտ մառախուղի մեջ կարելի յե կառավարվել համարյա առանց քողարկման: Մառախուղը կրծառայի վորպես քողարկվում: Կանաչ մարդագետնում քողարկվում են կանաչ խոտավ, ձյուղերով: Ծատ բան ել կախված ե այն խնդրից, վորը կառարում են: Այ բան ե որինակ՝ հարձակողական մարտը: Մարտիկները հաճախ գնում են թշնամու վրա բաց տեղանքով: Յուրաքանչյուր մարտիկ պետք ե քողարկվի թշնամու դիտողությունից: Ուրիշ բան ե—պաշտպանողական մարտը: Մարտիկները խրամատ են փորում, մտնում են նրանց մեջ և այստեղից յետ են մղում թշնամու հարձակումը: Այստեղ մեծ ուշադրություն են գարձնում խրամատի՝ քողարկմանը, իսկ խրամատը թաքցնում ե մարտիկներին: Մարտի քողարկումը զանազանվում ե յերթի և հանգստի քողարկումից: Ամեն տեղ քողարկման յեղանակները տարբեր են: Այդ բոլորը մարտիկը կարող ե չհիշել:

Բայց բողարկման բոլոր զլիսավոր կանոնները նա
լավ պետք եւ գիտենա։ Մնացածում մարտիկին
կողնի իր մտավոր կարողությունը։

ՔՈՂԱՐԿՈՒՄԸ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՄԵջ

Ի՞նչ բան է հետախուզությունը, գիտե՛ ա-
մեն մի մարտիկ։ Չի կարելի կռվել չխմացած, թե
ինչ է կատարվում թշնամու մոտ, ինչպիսի յե-
քեզնից առաջ ընկած տեղանքը, թե ինչպես է
ապրում տեղական բնակչությունը։ Այդ բոլորի
մասին տեղեկություններ պետք եւ ձեռք բերի հե-
տախուզությունը։ Ամեն բան թշնամու մասին
յերբեք չես իմանա, բայց պետք եւ աշխատել
վորքան կարելի յե շատ բան իմանալ։ Հետախու-
զությունը կատարվում է մինչև մարտը, մարտի
ժամանակ և մարտից հետո։ Թշնամուն ավելի լավ
դիտելու համար, հարկավոր է մոտենալ թշնա-
մուն աննկատելի, հարկավոր է լավ բողարկվել։
Այստեղ մենք չենք նկարագրի հետախուզի քո-
ղարկումը շարժման ժամանակ, վորովիետն քո-
ղարկման այն բոլոր միջոցները, վորոնք մարտի-
կը կիրառում է յերթում և մարտում հարմար են
և հետախուզությանը։ Շարունակենք խոսել նը-
րանց մասին։ Բայց հետախուզի քողարկման մեջ
մի քանի տարբերություններ կան մարտիկի մար-
տում քողարկվելուց։ Նրանց վրա իել մենք կանգ

առնենք, Հետախուզությունը հարկադրված է մոտենալ
թշնամուն, իսկ յերբեմն—նույնիսկ մանել նրա
տեղափորությունը։ Հետախուզի համար մեծ նշա-
նակություն ունի նրա հագուստը։ Մարտիկները,



Նկ. 1. Ջմուան խալաթ.

ինչպես մենք գիտենք, հագնում են պաշտպանա-
կան գույնի հագուստ։ Հագուստի պաշտպանական

գույնը սահմանված եւ վոչ պատահաբար, նա
ծածկում եւ մարտիկին տեղանքում ամառ ժամա-
նակ: Բայց նա հարմար եւ վոչ ամեն տեսակ տե-
սակ տեղանքի և ամեն ժամանակի համար: Զմեռ
ժամանակ որինակ՝ պաշտպանական ներկվածքը
չի թաքցնում մարտիկին: Զմռանը քողարկելու
համար պատրաստում են սպիտակ գույնի խա-
լաթներ, փորը հագնում են ձմռան զգեստավո-
րության վրայից (նկ. 1):

Սպիտակ խալաթն ունի կնդուղ (շապիկ)՝
աչքերի համար անցքով: Կնդուղը հագնում են
հենց ձմռան զիլսարկի վրայից: Աչքերի համար
անցըն անում են փորքան հնարավոր եւ նեղ:


Զեռքերին՝ ձմռան ձեռնսցների կամ թաթ-
պանների վրայից հագնում են սպիտակ գույնի
թաթպաններ: Վոտքերը պնդացնում են սպիտակ
հեսկիներով (օօմոտկամ) կոշիկների կամ կաճլակ-
ների (վալինկաների) վրայից: Եթեքեմն հագ-
նում են սպիտակ զանդապաններ կամ կաճլակ-
ներ, սպիտակ գույնով ներկված:

Սպիտակ խալաթները մարտիկին դարձնում
են համարյա աննկատելի ձյան վրա: Սպիտակ
խալաթները լավ ծածկում են ամպամած որը և
վատ՝ արև որը:

Մարտիկը զիշերը ձմեռվա խալաթում բոլո-
րովին անտեսանելի յէ, նույնիսկ 100 քայլից
պակաս տարածության վրա:


Սպիտակ խալաթներ հագնում են վոչ միայն
անհատ մարտիկներն ու հետախույզները: Յեր-
բեմն սպիտակ խալաթներ հագնում են ամբողջ
դորամասերը: 1921 թվին կարմիր մարտիկները
Քրոնշտադի տակ հարձակվում ելին սառցի և ձյան
միջով: Նրանք բոլորը հագնում ելին սպիտակ
խալաթներ:

Բայց սպիտակ խալաթները լավ ծածկում են
միայն բաց տեղում: Գլուղում, անտառում, թը-
փուտում լավ ծածկում են այսպես կոչված կա-
մուֆլաժական խալաթները: Մարտիկներից շատե-
րը տեսած կլինեն զրահապատներ և տանկեր,
ինչ փոր տարրորինակ գույնով ներկված: Զրահա-
պատը կամ առանկը ծածկված են անհավասար
դանագան գույնի բծերով: Բծերը լինում են սև,
գեղին, կանաչ գույնի: Շատերը տեսել են այդ-
պիսի ներկվածք ձմռան խալաթների վրա: Նույն-
իսկ սպիտակ խալաթի վրա յել կան մեծ անհա-
վասար սև բծեր: Քողարկման մեջ այդ տեսակ
ներկվածքը կրում ե կամուֆլաժկա անունը:
Քանի գեռ մարտիկը սպիտակ խալաթում գնում
ե սպիտակ, ձյունոտ զաշտով, խալաթը նրան լավ
և ծածկում, բայց բավական ե փոր մարտիկը մտնի
անտառ, թիերի մեջ, դյուղ, նա պարզորեն
ջոկնում ե մութ գիտի՞լի՞ն սպիտակ խալաթում
այլ առարկաներից՝ այդ ժամանակ ել պետք ե
ու տեսնեալու առաջնորդության վրա:



կամուֆլաժակին խալաթը: Նույնը պատահում է զրահապատի, տանկի, հրանոթի հետ:

Կամուֆլաժական ներկվածքը ինչո՞վ է ոգում մարտիկին: Յենթաղբենք, վոր մարտիկը պառկած է ացդպիսի խալաթ հագած սպիտակ ձևն վրա (նկ. 2):



Նկ. 2. Զենքակամուֆլաժական խալաթ.

Խալաթի սպիտակ գույնը ձուլվում է ձյան ճերմակության հետ և աննկատելի դառնում: Հակառակորդին տեսանելի կլինեն միայն տարորինակ ձեի բծեր, վորոնց մասին վոչ մի գեպքում չի կարելի մտածել, վոր նոքա ծածկում են մարտիկին: Ընդհակառակը, յեթե մարտիկը կամուֆլաժական խալաթ հագած կամպնի անտառի կամ մթափնած ներկնքի ֆոնում (խորքում), այդ գեպքում խա-

լաթի մուգ բծերը ձուլվում են անտառի գույնի հետ և մնում է անկանոն ձեի սպիտակ բիծ, այդ տեսակ սպիտակ բծով մարտիկի կերպարանքը դարձյալ դժվար է գտնել:

Այսպիսով կամուֆլաժական ներկումը ծածկում է մարտիկին զանազան տեղանքում:

Բացի զրանից, կամուֆլաժական ներկումն արգում է այն ձեռվ, վոր փոխում է առարկալի ձեւը: Տեսողության համար կանոնավոր առարկան, հեշտ է գտնել տեղանքում: Սպիտակ գույնով ներկված զրահապատը, պահում է իր ձեռ ու զրահապատի տեսքը: Նույն զրահապատը կամուֆլաժական ներկվածքով կորցնում է իր գծագըրությունը և տեսողության համար դառնում քիչ նկատելի:


Խալաթների ներկումը կատարում են իրենք զորքերը: Սև գույնը ներկում են մրով, իսկ սպիտակը — կավճով: Սև բծերը զլիսակորապես արգում են խալաթի վերին մասում: Կամուֆլաժական խալաթից բացի ձմռանը գործ են ածում հատուկ դեկորատիվ խալաթները: Սպիտակ խալաթի վրա գրվում են սև բծեր, վորոնք նման են ծառերի բներին, թփերին և ձյուղերին:

Դեկորատիվ խալաթը մարտիկին ծածկում է անտառում և թփերում: Մարտիկն աննկատելի յեւ գառնում մի քանի տասնյակ քայլի վրա, բաց

ձեռնատու չե բայց դաշտում։ Խալաթները չեղած գեպքում սովորաբար սպիտակ գունով ներկում են կիսամուշտակներն և վալինկաները։

Ամառը հետափույզներին և դիտողներին թաքցընելու համար գործ են ածում ամառվա կամուլաժական խալաթներ (նկ. 3)։ Ամառվա խալաթները ներկում են սև, կանաչ և գեղին գուներով։ Ամառվա խալաթները մատիկին ծածկում են գլխավորապես անտառում։ Բայց նրանք կարելի են գործածել և կանաչ մարգագետնում։ Մի քանի քայլի վրա կարելի են չնկատել կամուֆլաժական խալաթ հագած մարտիկին։


Ամառվա խալաթները պատրաստում են իրենք զորքերը։ Մարտիկին մարգագետնում քողարկելու համար կիրառվում է կորդակ—քողարկ-



Նկ. 3. Ամառվա կամուֆլաժական խալաթ։

ներն և հագուստ քողարկները։ Կորդակ—քողարկները ծածկում են մարտիկի իրանի վերեկի մասը։ Իրանի մնացած մասը թաքնվում է առվում, խրամատում, մարգագետնի ծալքում։

Կորդակ—քողարկը վրան կանաչ խոտ բուսած հողակույտի տեսք ունի։ Կորդակի հենքը պատրաստում են լարաններից մեծ թասակի (կալպակի ձևով։ Լարաններից հյուսած ցանցում ներհյուսում են կեղևաթելեր (մաշալկա) ներկված կանաչ գունով։ Մարտիկը նայում է կորդակի միջով (նկ. 4). Կորդակ հագած ժամանակ պետք է աեղափոխվել պառկած, արմուկների




Նկ. 4. Մարտիկը կորդակ—քողարկում։

վրա։ Կորդակ—քողարկ հագած մարտիկին կարելի յեն չնկատել 15 քայլ հեռավորության վրա։

Հագուստ—քողարկը պատրաստվում են ձիշտ այնպես, ինչպես կորդակ—քողարկները, բայց ամբողջ իրանի համար:

Հագուստը հազնում են վերնաշապկի և շալը-վարի վրայից: Կորդակ—քողարկում և հագուստում մարտիկը դիտողություն և կատարում պառկած: Ամբողջ հասակով կանգնած մարտիկին հագուստը չի ծածկում: Հագուստ հագած ժամանակ շարժումը կատարվում և սողալով: Քողարկման խալաթները, և կորդակներն և հագուստները լավ ծածկում են մարտիկներին: Ինչո՞ւ ամբողջ զորամասերի չեն հագցնում զրանցից: Մարտում մարտիկն ստիպված է շատ շարժվել: Պետք և կա-



Նկ. 5. Հետախույզը կեղաթելերից (մաշալկա) հյուսած հագուստ—քողարկում:

տարի վազեվազք, սողալ, հրաձգել, սվինսպրոնի գնալ. Այդ գեղքում կորդակներն ու հագուստները բոլորովին անպետք են: Չնայած վոր խալաթները գործ են ածվում, բայց մարտիկին դարձալ խանգարում են: Ուստի և քողարկման հագուստ սովորաբար հագնում են միայն դիտողները, հետախույզները, հեռախոսակները (Նկ. 5):

Հետախույզն աշխատում ե իր զորամասից անջատ (հեռու): Նա կարող է հակառակորդի ձեռքն ընկնել: Ուստի և հետախույզության գնախո հետը վոչ մի փաստաթուղթ վերցնել չի կարելի: Հակառակորդն իր զործակալների միջոցով հետեւում ե այն բանին, թե վո՞ր ուղղությամբ գնաց մեր հետախույզությունը: Հակառակորդին խաբելու համար, պետք ե զյուղից գուրս գալ կեղծ ուղղությամբ: Հեռանալով զյուղից վորեւ ծածուկ աեղ, հետախույզները փոխում են ուղղությունն իրենց հարկավոր ճանապարհով:

Ծածկված տեղերում, առանձին բակերում, գյուղերում կարելի յե սպասել հակառակորդի դարանակալության, ուստի և արդ տեսակ տեղերին պետք ե մոտենալ թաքնված թփերով, այդիների և բակերի յետեի կողմից:

Գյուղը հետախույզելուց հետո հետախույզները վոչ վորի զյուղից գուրս չեն թողնում: Իրենց դիտողության համար հետախույզնե-

ըլ խուսափում են այնպիսի տեղերից, վորոնք
խիստ կերպով աչքի լին ընկնում տեղանքում:
Ալդպիսի տեղերը միշտ գրափում են հակառակոր-
դի ուշադրությունը:

Հանգստանալու համար հետախույզները կանգ
են առնում ծածուկ տեղերում, ճանապարհից
դուրս, անտառապատ շեներում և գյուղակներում,
Գիշերոթից հեռանալիս չի կարելի թողնել թուղթ,
լրացրեր, պահածովի ամաններ, հակառակորդի
հետախույզությանը չոգնելու համար:

Հակառակորդից թաքնվելով, առանձնապես
ձմռանը, նրան մեղ հետեւելուց շեղել, զնալ իծա-
շարուկ, միևնուն տեղում առաջ ու յետ զնայ
դուրս գալ ճանապարհի վրա, տեղ—տեղ ել շարժ-
վել դեպի յետ—յետ:

Հակառակորդը կհակի հետախույզներին վե-
րաբարձի ճանապարհին: Հետախույզությունից
վերաբարձող հետախույզները զնում են այ ճա-
նապարհով: Հետախույզների քողարկումը շարժման
և մարտի մեջ (հետախույզները համախ հարկա-
դրված են մարտ մղել) մարտում յեղած բոլոր
մարտիկների քողարկման հետ միանման եւ: Դրա
մասին մենք կպատմենք ստորև:

ՔՈՂԱՐԿՈՒՄ ՀԱՆԳՍՏՈՒՄ ԿԱՄ ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆԳ- ՆԱԾ ԺԱՄԱՆԱԿ

Հանգստում կամ յերբ պահեստում են, զոր-

քերը տեղավորվումեն կամ գյուղերում, կամ ան-
տառներում և պուրակներում. բաց գաշտում
կանգնելը բոլորովին ձեռնտու չե, վորովհետեւ
վոչ մի կերպ չես կարող թաքնվել հակառակոր-
դի դիառղությունից:

Այս գեղագրում յեթե ստիպված են ոգավելու
վրաններից, նրանց պետք եւ առաջուց աննկա-
տելի դարձնել—ներկել պաշտպանական գույնով
կամ թե չե կամուֆլաժացնել, ինչպես մենք ա-
սացինք արդեն հետախույզների խալաթի մա-
սին:

Զորքերը վորտեղ ել և ինչի յետեռում ել
կանգնած լինեն, բոլորը պետք ե միշտ հիշեն
այն մասին, վոր իրենց ցուց չտան հակառա-
կորդին: Ամենից շուտ ինքնաթիռները, իսկ յեր-
բեմն ել վերերկրյա դիտողները տեսնում են
յերթական խոհանոցներ նրանց ծիփց, և նրանց
մոտ խոնված մարդկի, վորոնք ճաշ են ստանում
իսկ յերբեմն առանց վորեմ գործի յերթական
խոհանոցների մոտ թափառողներին: Հաշվելով
խոհանոցները, հակառակորդի հետախույզը կա-
րող ե զլիսի ընկնել, թե այնտեղ քանի՛ վաշտ,
մարտկոց ե հավաքված և ալին: Ուստի և անտա-
ռում խարուցկ վառել և խոհանոցները տաքաց-
նել թուլարգում և միացն մութն ընկնելիս, և
այդ ել այնպես, վոր հակառակորդը չնկատի ծա-
ռերի արանքից:

Գլուղում խոհանոցները կանդնում են չար-
դախներում կամ ծածկի տակ: Մարդկանց ամեն
տեսակ կուտակումն և շարժումն արգելվում է:
Ուտելիքի և մյուս բոլոր գործերի համար գնալ
փոքր խմբերով, սահմանված հերթով:

Բայց կարող ե պատահել հակառակը, մենք
պետք ե հակառակորդին կովից առաջ հանկարծ
խաբենք, հավատացնելով նրան, վոր մենք շատ
ավելի ուժեր ունենք, քանի իրոք կան: Այդ ժա-
մանակ զբուղերում հաճախ վառում են վառարան-
ները, անառաներում շատ խարուցիներ են վա-
ռում, շատացնում են ծուխը, վառելով ծխաղը-
լանները (տես ցածում) կամ ջրով թրջում են
գեռ չվառված գլխիկները, վորպեսզի նոքա վառ-
վեն և ծխով լցնեն շըջապատը:

ՔՈՂԱՐԿՈՒՄԸ ՅԵՐԲՈՒՄ ՄԱՐՏ ՄՏՆԵԼՈՒՑ ՍՌԱՋ

Յերթում քողարկվելին ամենից դժվար է:
Հակառակորդը խճուղուն և մեծ ճանապարհնե-
րին միշտ ել կհետեկի, վորովինեակ այդպիսի ճա-
նապարհները ցուց են արված բոլոր բարտեզ-
ների վրա: Այլ բան ե յեթե զորքերը գնում են
կողմնակի ճանապարհներով, և անտառով, այն-
տեղ թշնամու ինքնաթիոր կարող ե նրանց չը
նկատել: Բայց ցավը նրանումն ե, վոր կողմնա-
կի ճանապարհներով, վորտեղ սովորաբար վատ-

կամուրջներ և ձեղանուղի (գատ) են, ամեն ժա-
մանակ թնդանոթները, զրահապատճերն և գու-
մակները կանցնեն, հատկապես անձրև ժամա-
նակ:

Կարելի յե գնալ զիշերները (աես ցածում)
վորպեսզի լուսազեմին տեղ հասնեն, բայց զի-
շերը գանդաղ են քալում և քալելն ել ավելի
դժվար ե: Իսկ յեթե հարկադրված են գնալ ցե-
րեկով և անմիջական մարտի վտանգ չկա, ձեռն-
տու յե զորքերը տանել վոչ մեծ մասերով, որի-
նակ վաշտ առ վաշտ: Իսկ յերբ վոր մենք պատ-
րաստվում ենք անմիջապես մարտ մղել, այն ժա-
մանակ այդ տեսակ ցրումը ձեռնտու չե և զոր-
քերը շարժվում են յերթալուներով, ունենալով
հրետանին հետեւակի և հեծելազորի մեջ տե-
ղում:

Հակառակորդի ինքնաթիւնները կինսուեն մեր
զորացուները: Յուրաքանչյուր զորամասում նը-
ւանակում են յերկինիը դիտողներ: Ինքնաթիոր
յերեալուն պես նոքա պայմանական ազգանշան
են տալիս: Յեթե ինքնաթիոր յերեաց հանկար-
ծակի, մարտիկները կանգ են առնում և մնում
են անշարժ, քանի դեռ ինքնաթիոր չի ծածկվի
տեսողությունից: Յեթե ինքնաթիոր նախապես
նկատել են և զորամասը մեծ չե, մարտիկները
պառկում են առուների մեջ կամ պարզապես ճա-

նապարհի յերկարությամբ նրա կողքերում, ցըր-
փում են թփերի մեջ, թաքնվում են ծառերի տակ՝
Ինքնաթիւից թաքնվելու ամենալավ միջոցը—
թաքնվել փորե և առարկացի ստվերում:

Ինքնաթիւից լավ քողարկում ե անտառը:
Չմունը ճանապարհից դուրս գալ չի կարելի:
Չմունը ճանապարհն ավելի լավ և թաքնում
քան խոպան հողը։ Հակառակարգին կարելի յե-
խաբել այսպես. զորքերը, գտուղից դուրս գալով,
կարող են սկսել շարժվել կեղծ ուղղությամբ։
Ապա թաքնված տեղում զորքերն անցնում են
իրենց հարկավոր ուղին։ Թշնամու գործակալնե-
րը խաբած կլինեն։ Ինքնաթիւը յերեալուց հե-
տո կարելի յե սկսել շարժումը հակառակ ուղ-
ղությամբ, վորպեսզի հետո նորից շարունակեն
նախկին շարժումը։ Հեծելազորում ինքնաթիւը
յերեալուն պես պետք և դուրս գալ ճանապար-
հից, թաքնվել անտառում կամ առանձին ծառե-
րի տակ, տեղական առարկաների ստվերում. Յե-
թե ձիերը վարժեցրած են, ձիաթափ լինել, ձին
նստեցնել և պառկել ձիու ստվերում։

ՔՈՂԱՐԿՈՒՄԸ ՀԱՐՁԱԿՈՐԱԿԱՆ ՄԱՐՏՈՒՄ

Թշնամուց 10—15 կիլոմետր հեռու յերթական
դրաստուները կարող են ընկնել թշնամու հրե-
տանու հեռավոր կրակի տակ։ Ուստի և անհրա-

ժեշտ ե վոր մեր մարտիկները վորքան կարելի
լի արագ և ըստ հնարավորության աննկատելի
մոտենան հակառակորդին այնպիսի տարածու-
թյան վրա, փորից նորքա իրենք կարողանան նը-
րան պատասխանել իրենց կրակով։ Յերթայու-
ներից իրենց շարժման համար բացազատվելուց
հետո զորքերն ընտրում են ծածուկ մատուց-
ներ. հեղեղատներ, ձորակներ, անտառ, թփուտ-
ներ՝ քանի գեռ զորքերը ծածկված են, նոքա
սկզբից գնում են գումարտակային, հետո վաշ-
տավին և դասակալին սյուներով։ Բաց տեղերն
անցներու ժամանակ մարտիկները գնում են ա-
րագացրած քազով, մեկ-մեկ կամ փոքր խմբե-
րով։ Բաց տեղն անցներուց հետո, մարտիկները
նորից հավաքվում են զորաալուն կազմում։

Լավ և թշնամուն մոտենալ զորաալունով։
Մարտիկները բոլորը մի տեղ են, հրամանը հեշտ
ե փոխանցել, յետ մնացողներ չկան։ Սակայն
թշնամին թուց չի տալ յերկար ժամանակ զո-
րաալունով շարժվել։ Միշտ ավելի և ավելի կը-
անհանգտացնի մեր մարտիկներին նրա հրետա-
նական կրակը։ Գումարտակները կամաց-կամաց
ցրվում են վաշտառ վաշտ, վաշտերը—զտակ
առ դասակ, դասակները—ջոկ առ ջոկ։

Ջոկի հրամատարը, ստանալով մարտական
խնդիրը, առաջնորդում է իր ջոկը։ Ջոկը կու-

տակված չի գնում: Մարտիկները գնում են այս
կարգով. յերաժաշար, ոձաշար: Զոկի հրաժա-
տարը և ջոկի ամեն մի մարտիկ հոգում և քո-
ղարկման մասին: Մարտում լուրաքանչչուր մար-
տիկ պետք է հաստատուն մտարերի.

1) Նարժման ժամանակ միշտ խիստ կարգ
պահպանիր: Մարտում մարտիկների շարժումն
անընդհատ չե. Տեղանքում ծածկված տեղերը
սովորաբար հերթափոխվում են բաց տեղերի
հետ: Ծածկված տեղում կարելի յե հանգստանալ;
զննել շրջապատը և, յեթե հարկափոք ե, կրակ
բանալ: Բաց տեղը պետք ե անցնել շտապով:
Մարտիկները մարտում ալգուես ել շարժվումնեն:
Մեկ ծածկաբանից մյուս ծածկաբանը: Բաց տե-
ղով պետք ե զնալ կամ արագ քայլով, կամ կը-
ռացած, կամ չորեքթաթ: Իսկ յեթե տեղը բո-
լորովին բաց ե, ալդ դեպքում պետք ե շարժ-
վել սողալով: Շատ բան կախված է հենց իրեն-
ցից—մարտիկներից, մեկը կտրող և նկատելի
դառնալ հակառակորդին, իսկ մյուսը վոչ:

2) Մարտիկը պետք է զնու կտրուկ (իրա-
հաձգային) բայլով, առանց ձեռքերը բափահա-
րելու յեզ իրանը նոնելու, վորովինետե հակառա-
կորդը շատ լավ տեսնում է ձեռքերի և իրանի
ճոճվելը, աչքի յե ընկնում նրա միանգամից

վոտքի յելնելը, ընդհանրապես խիստ շարժում-
ները:

Վազեվազքի համար վոտքի կանգնելիս պետք
է վերկենալ ստիռն, չանել խիստ մոլեգին շար-
ժումներ: Վազեվազքի ժամանակ, վորքան հնա-
րավոր ե ցած կախել գլուխն և չթափահարել
ձեռքը: Վազեվազքը պետք է կատարել արագ և
կտրուկ: Վազեվազքից հետո մարտիկը պառ-
կում ե վալրկյանաբար, ամբողջ իրանով գետին
պառկելու հետ միաժամանակ չբարձրացնել վերև
հրացանը: Յերբ պառկածես գետնի վրա, պետք է
ըիչ շարժվես: Ողտակար ե վազեվազքը հերթա-
փոխել սողալով անցնելու հետ, այն ժամանակ
մարտիկը կբարձրանա վոչ այն տեղից, վոր-
տեղ նա պառկեց: Այդ բանը հակառակորդի գի-
տողներին կշփոթեցնի:

Սողալով անցնելու շատ տարբեր յեղանակ-
ներ կան: Կարելի յե սողալ պառկած՝ փորի վրա,
գեմքը գետի գետինը, մարմինն ամուր կպցրած
գետնին: Մարտիկը տռաջ է շարժվում, առաջ
տանելով հերթով նախ աջ ձեռքն ու աջ վոտքը,
իսկ հետո ձախ ձեռքն և վոտքը, չհեռացնելով
նրանց գետնից: Կարելի յե սողալ արմունկների
վրա, նրանք միաժամանակ առաջ տանելով, և
ապա ձգում ե գետի նրանց իրանը՝ կամ հեն-
վում է արմունկների և վոտի թաթերի ծալրերի

վրա, նըանք հերթով տեղափոխելով: Վերջապես, կարելի յէ սողալ հենվելով արմունկների և ծնկների վրա (չորեքթաթ):

Ամեն մի մարտիկ սողում և այն յեղանակով, վորին նա ընտելացել է. հարկավոր և միայն աշխատել ավելի քեզ կարվել գետնից: Սողալով անցնելու համար մարտիկն ընտրում է այնպիսի տեղեր, վորոնք ծածկված են կանաչ խոտով կամ մանր թփուտներով, առուներ:

Ամեն տեսակ առաջ շարժվելու ժամանակ, զգուշանալ ձակատի յերկարությամբ շարժվելուց: Ամենից քիչ մարտիկը նկատելի յէ, յերբ նա գնում է ուղիղ հակառակորդի վրա:

Շարժվող մարտիկին հաճախ մատնում է հրացանի սվինի փայլը: Ուստի և պեաք և հրացանը բռնել հորիզոնական դիրքով, այսինքն այն ձեռվ, վոր սվինի սուր ծալը շատ ել գետնից բարձր շինի և ուղղված լինի դեպի հակառակորդը:

3) Խուսափիր բաց տեղերից յեվ հարմարվիր տեղանին: Վոչ մի հագուստ—քողարկ չի կարող ամբողջովին ծածկել մարտիկին: Մարտիկին ավելի շատ ծածկարան կարող է տալ տեղանը: Յուրաքանչյուր մարտիկ պետք է գիտենա հարմարվել տեղանքին: Յեթե տեղանքը ինչպես սեղանը, հարթ լինի հարմարվելն ել արժեք

չել ունենա: Տեղանքը սովորաբար լինում է անհարթ, ծածկված հողաթմբերով, առուներով, ձորակներով, բուսականությամբ, տեղական առարկաներով: Տեղանքուն մարտիկը պետք է ոգտագործի ամեն մի ծածկարան մինչև ամենափոքր բլրակն անդամ ներառյալ:

Հարմարվիր տեղանին: — Այդ նշանակում է, տեղանքի, տեղական առարկաների և բուսականության ովնությամբ աշխատիր զառնալ թշնամու համար անտեսանելի և միենալու ժամանակ շարունակիր քո ինպիրը կատարել:

Մարտիկը պետք է լնտրի իր դեպի հակառակորդը շարժման համար ծածկված մատուցներ: Ծածկված մատուցներ կարող են լինել հեղեղպատները, ձորերը, առուները, թփուտները, զյուղերը, անտառը:

Շարժվելուց առաջ, մարտիկը պետք է ուշադրությամբ զննի և վճռի, վոր կողմից զնան է իրենց ձեռնտու: Ճանապարհին շարժվելիս, պետք է զնալ ցանկապատերի և ցանկերի յերկարությամբ, կողնակներով, ձանապարհի կողքերով, ուր տնկված են թփեր, ծառեր: Մարտիկը շատ լավ նկատելի յեւ յերկնքի պարզ ֆոնի վրա: Ուստի պետք է խուսափել բարձրությունների կատարը բարձրանալուց, շրջանցել նրանց լանջի կողմով: Յեթե մարտիկը պետք է

տում վոչ բոլոր մարտիկները խաղաթներ կունենան: Սովորաբար մարտիկը կկռվի պաշտպանական գույնի հագուստում: բայց պաշտպանական գույնը լրիվ կերպով չի ծածկում մարտիկին: Այդ պատճառով անհրաժեշտ է մարտիկի հագուստը քողարկել ձեռքի տակ լեզած նյութով: Առաջին հերթին մարտիկը քողարկում է գլուխն ու ուսերը, փորովինետի մարտում այդ մասերը բուրից շատ նկատելի յեն թշնամուն:

Գլխի քողարկման համար կորդակի կամ գլուխի կամարի յետևում խրում են խոտ, դաշտային ծաղիկներ կամ փոքր ճյուղեր: Բուսականությունը պետք է ծածկի ամբողջ զիմարկը (նկ. 7): Ուսերը ծածկում են բուսականությունն իրանի առաջին մասի վրա կիտելով: Ճյուղերը հարմարեցնում են զրատի կորուն, իրեղենի տոպրակին, գոտուն և կամ հենց տինակես պահել ձեռքում: Հասկանալի յե, փոր ալղակոս պետք է քողարկվել տեղում պառկած, յեթե կենդանի թփերը կառան վարելահողի միջով, հակառակորդը նրանց չի հավատալ:

6) Դամանականմիջավես բուղարկիր: Մարտում շարժումը հերթափոխվում է դադարների հետ: Մարտիկները շարժվում են թաքսոցից թաքսոց: Թաքսոցի մոտ մարտիկը կանգ է առնում և պառկում է: Յեթե չր-

բամայված ե, նա սկսում է հրաձգություն: Մատիկի ընտրած տեղը, պետք է հարմար լինի թըշնամուն հրաձգելու: Բացի զրանից, նա պետք է ըստ հնարավորության թաքցնի մարտիկին: Ավելի հարմար տեղ ընտրելու համար մարտիկն իրավունք ունի շարժվել մի քիչ այս կամ այն կողմը: Պետք է աշխատել շարժման և կանգառման համար հանգերձանքի գույնի տեղանք ընտրել: Գունաթափի պաշտպանական հանգերձանքը քողարկում է հնձած տարեկանի արտում, ավագում: Նոր զգեստավորությունը—կանաչ մարդագետնում:

Ինչպես կանկ առման, նույնպես և շարժման ժամանակ մարտիկը քողարկվում է ճյուղերով, խոտով, խրձերով: Կանգառման ժամանակ մարտիկները հաճախ ամրանում են խրամատներում: Ամեն մի մարտիկ իրեն համար վորում է հրաձգալին բջիջ: Բջիջից թշնամու կողմը գուրս թափած հողը մարտիկը քողարկում է տեղանքի գույնով: Խրամատի հողը միշտ ջոկնվում է չոր հողից իր գույնով: Ուստի բջիջի մերը վերևից ծածկում են չոր հողով կամ ճիմով, նայած թէ վորտեղ են վորում—վարելահողում կամ մարդագետնում: Կանգառումների ժամանակ մարտիկ—զիտողները վոխում են իրենց կերպարնքի տեսքը: Կարելի յե իրենից պատկերացնել

վորեն առարկայի տեսքը (ձեզ), որինակ՝ կոճղի։
Դրա համար մարտիկը նստում է գետնին ծալա-
պատիկ, զլուխը կախ է գցում ծնկների վրա,
հրացանը դնում է գետնին։ Հակառակորդը հեռ-
վից դիտելով, հեշտությամբ կարող է խարվել։
Այդ գրության մեջ պետք է մնալ մի առ ժամա-
նակ առանց շարժվելու։ Բայտ այդմ մարտիկն ըն-
դունում է մի զրություն, վորում կարելի յե
մնալ յերկար ժամանակ։

7) Յեղիւ զգույց անտում։ Անտառում
մարտիկից առանձին քողարկում չի պահանջվում։
Անտառը հենց ինքը լավ քողարկող է։ Անտա-
ռում մարտիկը հուսալի կերպով թափնվում է հա-
կառակորդի դիտողությունից։ Բայց անտառում
թշնամին ել նկատելի չե և հեշտությամբ կարելի
յե ծուղակն ընկնել։ ուստի անտառում պետք է
շատ զգուց լինել։ Այն մարտիկին, վորին թշնա-
մին նկատում ե անտառում, հեշտությամբ ել հըս-
կում ե։ Զի կարելի շարժվել ճանապարհներով
կամ ուղատներով։ Ճանապարհից պետք է դուրս
գալ և շարժվել անտառով, վոչ հեռու ճանապար-
հից։ Նույնը պետք է անել ուղատի վերաբեր-
յալ։ Անտառում կհանդիպեն ուղատներ և բա-
ցատներ։ Ուղատները, բացատները և ճանա-
պարհները—դրանք անտառի այն տեղերն են,
ուր թշնամին կարող է հեշտությամբ մեզ նկա-

տել և գնդակոծել։ Բացատը լավ ե շըջանցել
կամ սողալով անցնել։ Ճանապարհներն և ու-
ղատները պետք ե անցնել սողալով կամ թե չե
վազելով կտրել անցնել նրանք մի թափով։ Ան-
տառում ամեն մի աղմուկ լսելի յե հեռվում։
Ամեն մի մարտիկ գիտե թե ինչպես հեշտու-
թյամբ արձագանք են տալիս քայլերը, ծառերի
ճյուղերի ճռոցը, տերեների խշոցն անտառում։
Անտառում վորքան կարելի յե պետք ե շարժվել
լուռ, ականջ գնելով ուշադրությամբ ամեն մի
ձախի։ Անտառից նախքան բաց տեղ գուրս գա-
լը, հարկավոր ե ուշադրությամբ զննել չորս
կողմը։ Յեթե անտառը նոսր ե, այդ դեպքում
ավելի լավ ե սողալով անցնել բացատը, և ապա
զգուշությամբ բարձրանալ։ Ուշադրությունը,
ըջնալեցողությունը և զգուշությունը—ամենալավ
քողարկողներն են անտառում։

8) Գիշերը—խուսափիր ալմուկից։ Գիշեր
ժամանակ աշքերով հակառակորդին դիտելը սաս-
տիկ թուլանում է։ Բայց և այնպես գիշերն ա-
մեն մի ձախ լսելի յե հեռվում և հստակ։ Պետք
ե շարժվել վորքան կարելի յե հանդարտ։ Դրա
համար վոտքերն ավելի վեր բարձրացնել, չսայ-
թաքելու համար և հանդարտ դնել գետնին։
Շարժման ժամանակ աշխատել փափուկ գետնի
վրալով գնալ։ Բոլոր հանդերձանքը պետք ե լավ

հարժարեցրած լինի: Փամփուշաները, կաթսայիկը, հրացանը չպետք է միմյանց կպչեն: Իրերի տոպրակից առաջուց պետք է հանել բոլոր ձայն հանող առարկաները: Շարժման ժամանակ չաղմկել և չխոսակցել: Միշտ պետք է հիշել, վոր հակառակորդը պիշեր ժամանեակ. կատարում է մեծ մասամբ լատզական գիտողություն: Այսուամենայնիվ, ինչ տեսակ մուժ գիշեր ել լինի, չի կարելի այնպես կարծել թե ինքդ անտեսանելի լիս հակառակորդի համար: Շատ բան կարելի լի տեսնել գիշերը: Ամենամուժ գիշերին անզան յերկնքը միշտ ել պարզ է ու հստակ, քան գետնի յերեսին յեղած առարկաները: Յեթե նայելու լինենք ձորակից գեպի բարձրության վորե և կետը, տմեն մեկը, վոր գնում և բարձրության վրացով լավ նկատելի կինի: Ահա թե ինչու պետք է գիշերը խուսափել բարձրություններից: Վորպեսզի դու ավելի լավ տեսնես, պետք է կոանաս ցած, դեպի զետինը: Քո կողքին վոտնածայն կամ շարժում լսելով, պետք է անմիջապես պառկես: Պառկած մարդը գիշեր ժամանակ համարյա աննկատելի լի: Մարտիկներն իրենց մոտով անցկացող հակառակորդից ծածկվում են թփերում, ծառերի յետեռում, առվում, ջախի (խոփի) կուլտում: Լուսնակ գիշերին թաքնվում են տեղական առարկաների ստվերում: Գիշերը, մինչև իսկ լուսնակ

ժամանակ, սովացող հրաձիգն արդեն անահամենելի լի չե 300 քաղցի վրա, իսկ պառկածը — տեսանելի չե մինչև իսկ 100 քաղցի վրա:

Հակառակորդը տեղանքը լուսավորում է լուսարձակներով, լուսատու ոռոմեներով, արկերով և հրթիռներով: Լուսարձակի ճառագալթների տակ շարժվող առարկաները լավ տեսնվում են: Մարտիկները լուսարձակի ճառագալթի տակ ընկնելով մնում են անշարժ: Թաքնվելն արդեն ուշ ե: Իսկ լեթե լուսարձակի ճառագալթը միայն առաջ է շարժվում, այդ գեղագրում ավելի լավ է պառկել սուարկաներից մեկի յետևում: Լուսարձակից հատկապես պետք է թաքցնել հետեւյալ վազուն առարկաները: կաթսալիկը, սվինը, բահը: Հրացանը միշտ պետք է կախ գցել, վորպեսզի սվինի վազը նկատելի չլինի: Մարտիկը նույն կերպ է վարվում, հակառակորդի կողմից տեղանքն ուրիշ ամեն տեսակ լուսավորելու դեպքում: Գիշեր ժամանակ վոչ մի գեպքում չթուլապարել ծխելը: Գիշերն ավելի քիչ աղմուկ, ավելի համարձակություն ունենալ:

9) Զմուանը հողարկիլիր խալարով, մքությամբ յեվ յեղանակով: Զմուանն ավելի լավ է շարժվել ճանապարհով, և վոչ թե խոպան տեղերով: Ճանապարհի զույնը տարբերվում է ձյունածածկ գաշտի գույնից — նա ավելի լավ է

պաշտպանում ինքնաթիւի դիտողից։ Սառնամանիքի ժամանակ ճանապարհի ձյունը սաստիկ ճռճռում ե։ Ուստի ավելի լավ ե այդ դեպքում մի քիչ ճանապարհից դուրս գալ և գնալ նրա լեզրերով, փափուկ ձյունի վրայով։ Քողարկումը ձմռանը շատ դժվար է։ Ամենալավ քողարկող միջոցը հանդիսանում են խալաթները, վորոնց մասին մենք արգեն խոսեցինք։ Խալաթներ չեղած դեպքում կարելի յե ոգագործել մթությունը կամ միգապատ ձյունոտ լեղանակը։ Սա ծածկում ե վորոշ չափով։

10) Որտեղիր ծխածկույթից։ Հետախուզության մեջ և հարձակողական մարտում քողարկման միջոցները շատ բանում նման են։ Սակայն տարբերություն ել կա։ Հետախուզությանը սովորաբար մասնակցում են փոքրաթիվ մարտիկներ, Նրանց համար թաքնվելն անքան ել դժվար չե։ Հետախուզները կարող են փոքր ինչ քաշվել դեպի աջ կամ ձախ, ծածկված մատուց դժուկ և նրանով առաջ շարժվել։ Այլ բան ե մարտում։ Հարձակմանը մասնակցում են հազարավոր և տասնյակ հազարավոր մարտիկներ։ Պետք ե հարձակել լայն ճռկատով, շատերը բայց տեղով։ Մարտիկն այնպես ազատ չե մարտում, ինչպես հետախուզը։ Նա չի կարող իր սեփական ցանկությամբ անց կենալ հարևանների հարձակման


անեղածասը, յերկար ժամանակ թաքնվելը մի տեղում, վորովհետև այդ դեպքում նա յետ կմնա ընկերներից։ Պետք ե մտածել մարտում վոչ միայն այն մասին, ինչպես քողարկել անհատ մարտիկին, այլ և այն մասին, ինչպես քողարկել հարցուրավոր և հազարավոր մարտիկներին։ Բացի մարտիկներից պետք ե քողարկել հրետանու, տանկերի, սալերի մեծ քանակություն։ Շատ են ոգնում ամեն տեսակ խալաթները հագուստ — քողարկներն և այն, այլև մարտիկների իրենց տեղանքին հարձարավելը։ Բայց զորքերի ամբողջ բազմությունը թաքնել հսարաւոր չե։ Առանձնապես դժվար կինի թաքնել մարտիկներին գետերից անցնելու ժամանակ։ Լաստանավերում գտնված մարտիկներին թաքնվելու տեղ չկա, մինչդեռ նրանք հակառակորդի դիտողության տակ են ամբողջ ժամանակ։ Նշանակում ե, պետք ե գտնել դարձյալ քողարկման այլ միջոցներ, վորոնք ծածկելին միաժամանակ հարցուրավոր և հազարավոր մարտիկների։

Մի կողմից ոգտվում են բնական քողարկմամբ։ Հարձակումը կատարվում է առավոտյան աղջամուղին, մթության մեջ, վաս լեղանակին։ Սակայն համար հարկադրված հարձակվում են թշնամու վրա ցերեկը, պարզ լեղանակին։ Այդ դեպքում մարտիկներին ոգնության և համուռմ

տեխնիքական քողարկումը։ Յեթե մասախուզ
չկա—այլպիսին պետք է առաջ բերել։ Մառա-
խուդ չինի, թող լինի ծուխ,—նա ծածկում է
մարտիկներին թշնամուց։ Սկզբում հնարեցին
ծխի ամպ հասարակ ձևով—վառում ելին վորե է
նյութ, ինչպես խոնավ ծղնոտ կամ գոմազը, և
ստանում ելին ծխի ամպ։ Սական ամեն մեկն
ել գիտե, վորքան անհարմար է, այն ել մար-
տում, քաշ գալ ծղնոտի մեծ կույտի յետեկց,
զորն և միշտ ել հնարավոր չեր մը-
թերել ժամանակին։ Ուստի և ծխալին ամպ ըս-
տանալու համար սկսեցին ողտվել նախտպես
պատրաստած ծխաղլաններից։ Ծխի ամպն ան-
փոնեցին ծխածածկույթ։ «Ծածկույթ» բառը
ցուց է առլիս, վոր նա պետք է մեր զորքերին
հակառակորդի դիտողությունից ծածկի։

Ծխածածկույթի ծխաղլանները սավարա-
թովել (կարտոն) կլոր տուփեր են (գլաններ),
վորոնք լցված են ծխալին հատուկ բաղադրու-
թյամբ։ Ծխաղլանն այնքան ել մեծ չե, յերկա-
րությունն ե—30 մմ։ Լայնությունը—8 մմ։
Ծխաղլանի ծանրությունը մոտ 1-ից-կես կիլո-
գրամ է։ Ծխաղլանները վառվում են, լուրաբան
չցուր ծխաղլանի մեծ յեղած շփվող հատուկ
հարմարանքի ովնությամբ։ Յեթե ծխաղլանը շրփ-
վելուց չի վառվում, այն կարելի յե վառել հա-

րկան ծխաղլանով, լուցկով, ծխախոտի դլանակով։
Մենք յերեք տիպարի ծխաղլաններ ունենք. սև,
սպիտակ և մոխրագույն-սպիտակ ծխով (նկ. 8):



Նկ. 8. Ծխածածկույթի ծխաղլանները

Ծխածածկույթներ սարքելու համար ամե-
նալավ ծխաղլանները հաշվվում են սպիտակ
ծուխ ունեցողները։ Նրանք իրենց մեծությամբ
մի քիչ ավելի յեն մյուս ծխաղլաններից և կը-
ուում են 2 կրտ։ Նրանց ծուխն առողջության հա-
մար անվտանգ է և չի խանգարում շնչառու-
թյանը։ Ծխաղլանը վառվում է 5—6 րոպեյում։
Այլպող ծխաղլանն ազատ կարելի յե վերցնել

ձեռքը: Զուրը նետված ծխաղլանը չի սուզվում
և շարունակում է վառվել:



Նկ. 9. Սպիտակ գույնի ծխածածկույթ:

Առ ծուխ ունեցող ծխաղլանը նույնպես
փանգավոր չե ասողջության համար: Ծխաղլա-
նը վառվում է 3—4 րոպեյում: Զրում ծխաղլ-
անները հանգչում են և սուզվում ջրի տակը:
Վառված ժամանակ ծխաղլաններն ուժեղ բոցեր
են արձակում, նրանց հետ զգուշ պետք է վար-
վել:


Մոխրագույն սպիտակ ծխով ծխաղլանները
տարբերվում են սև ծխաղլաններից իրենց կար-
միք զլախիով (սև ծխաղլաններին կանաչ են): Չոր
տեղանակին նրանց ծուխը համարյա սև է, խո-
նավ լեղանակին գրեթե սոլիտուկ դույնի: Ծու-

խը փոքր ինչ խեղղող ե և հազ ե առաջացնում:
Մարտիկները կամ հագնում են հակագաղեր կամ
բերանն ու քիթը ծածկում են թաց թաշկինա-
կով:

Ծխաղլանները կամ տեղափոխում են առան
ձին տոսպրակներով, ամեն մեկի միջին 6—8
ծխաղլան, չորս տոսպրակներով (մեշոք) ծխաղլ-
անները տեղափորվում են յերկաթե հատուկ
թմբուկների մեջ նրանց տեղափոխելու գետնի
վրալով զլորելով, կամ ծրաբում են փայտի ար-
կղների մեջ ամեն մեկում 15 ծխաղլան դնելով:
Ալդպիսի արկղը տանում են յերկու մարտիկներ:
Ծխածածկույթ սարքելու համար սովորաբար
հետևակից զորանասեր են առանձնացնում, մո-
տավորապես 50թ մետր ճակատի վրա—մեկ գո-
սակ 50 մարտիկներով: Ամեն մի մարտիկն ըս-
տանում է մի տոսպրակ 6 ծխաղլաններով, վորոնք
պետք է սպասարկեն 10 մետր ճակատի տեղամաս:
Ծխաղլանները դարսվում են մեկը մյուսից մի
քիչ հեռավորության վրա: Վորքան հակառակոր-
դը մոտ է, մեկը մյուսին անքան ավելի մոտիկ
են զրվում ծխաղլանները 2—4 մ. վրա):

6—8 ծխաղլան ունեցող մարախիկը, բոլորը
վառում ե միանգամից: Դրա համար անհրաժեշտ
է անդադար կրել նոր ծխաղլաններ, վորի համար
նշանակվորմ են ծխաղլան կրողներ: Ծածկույթի

վրա ամենից շատ ազգում եւ քամին։ Քամու ամենաձեռնառու ուղղությունն եւ ուղիղ դեպի թըշնամին կամ մի քիչ շեղակի։ Այդ ժամանակ հարձակվող մարտիկներն ամբողջ ժամանակ ծածկը ված կլինեն ծածկությով, իսկ հակառակորդը վոչինչ տեսնել չի կարող։ Վորպեսզի թշնամուն հարկադրեն դիմակներ հագնելու, ծածկութին խառնում են թունավոր գաղեր։ Այդ բանը խիստ վատացնում եւ թշնամու հրաձգության դիպուկությունը։



Նկ. 10. Մե գույնի ծխածածկութ.

Կողքից վիշած քամու դեպքում քիչ ծխառվաններ են պետք, քան դեպի հակառակորդը, կամ հակառակորդից դեպի մեզ յեղած քամու ժամանակ։ Ծխածածկութի բարձրությունը հասնում է 50—80 մետրի։ Քանի յեղանակը տաք ե,

ծածկություն այնքան ավելի յէ բարձրանում։ Սաստիկ անձրկի և ձյունի ժամանակ ծածկութի բարձրությունն իջնում ե, բայց և այնպես ծածկութը խտանում ե, անդանում։ Հակբնդգեմ (դեմի) քամու ժամանակ հետախուզները ծխագլանները վառում են իրենց զորքերի առջևում։ Զեւսպառ լին գիշերը վառել ու ծուխ ունեցող ծըխագլաններ, ձմեռը—սպիտակ ծխով (նկ. 9 և 10)։

Յեթե հարկավոր ե ծածկութը բարձրացնել շատ վերև, ծխագլանների մոտ խարույներ են վառում։ Խարույների տաք ողը այդ դեպքում բարձրացնում է ծածկութը։ Գիշեր ժամանակ հակառակորդի լուսարձակի ճառագալթները բանդ կլինեն ծխածածկութին։

Ծխածածկութները բարձրանում են լայն ճակատով, այլապես նրանք միան հակառակորդի կրակը կզբավեն։

Ծխածածկութով քողարկում են սժանդակների տեղաշարժումը, զորքերի ամեն տեսակ զորաշարժերը, հեծելազորի տեղաշարժումը։ Ծածկութը կարող ե հակացական ոգուտ տալ տանկերի և զրահապահների զրոնները ծածկելու գործում։ Ծածկութը շատ անհրաժեշտ եւ թշնամու աչքի առաջով գետերն անցնելու ժամանակ։ 11) Կիրառիր կեղծ հարձակումներ (ցույ-


կել հակառակորդից խրամատները: Խրամատները ծածկում են մարտիկներին:

1) Խրամատի բողարկումը: Մարտում խրամատները սովորաբար փորում են աստիճանաբար: Առանձին բջիջները միացվում են մեկ խրամատում, վորն անդադար ուղղվում և ամրացվում է: Խրամատից գեղի թիկունքն անց են կացնում խրամուղիներ:

Խրամատը խնամքով քողարկվում է: Մենք արդեն գիտենք այն մասին, թե ինչպես մարտիկը մարտում իր բջիջը բողարկում է: Գլխավորապես քողարկվում է հողաթումբը (պատվար), վորը ծածկում է հակառակորդի գնդակներից և դիտողությունից: Վերերկրյա դիտողության ժամանակ խրամատի պատվարը հակառակորդը լով տեսնում է: Խրամատի վոսը հակառակորդը կարող է տեսնել միայն ինքնաթիւից: Ուստի և խրամատի վոսը քողարկվում է, գլխավորապես, ոգալին դիտողությունից:


Խրամատի պատվարը քողարկվում է այսպես, ինչպես և բջիջն: Ամենից առաջ նրա գույնը պետք է հարմարացնել տեղանքի գույնին: Զառանը հողաթումից ծածկում են ձնով: Կանաչ մարդագետնի հողաթումից քողարկվում է ձիմով, շաղ են տալիս կանաչ խոտ կամ ձլուղեր, հնձած դաշտում—ձդնոտ: Մի խոսքով պատվարը հարմա-

րեցնում են տեղանքի գույնին: Յեթե ժամանակը ներում է կիրառում են տեխնիքական քողաթուման միջոցները. յեթե խրամատը նախապես երկառուցված, պատվարի վրա ցանում են շուտ ծլող սերմեր (զաշտալին առվուլտ, յերեքնուկ): Մի քանի գեղքում պատվարը ներկում են տե-



Նկ. 11. Պատվարի ներկումը

դանքի գույնով, ըստ՝ վորում լեթե հակառակորդը հեռու չեւ և խրամատից գուրս գալ չի կարելի, սերկում են խրամատից. Ներկվածքի դիտողությունը կատարվում է առանձին գործիքով—շրջադիտակով (պերիսկոպ): Ներկումնեն առանձին գործիքի ոգնությամբ, վորը կոչվումէ ներկացան (նկ. 11):




Նկ. 12 և 13 Խըստառի շորժական ձուծելու:

Հակառակորդից պատվարը թաքցնելու համար, պետքէ թաքցնել և խրամատի փոսը: Խրամատի փոսի սեւ շերտն իսկուն հակառակորդի ողային դիտողի աչքովն եւ ընկնում: Խրամատը վերեվից ծածկում են շարժական քողարկներով, վորոնք կարելի դեպքում կարող են դեն գցվել կամ մի քիչ բարձրացվել: Այդ տեսակ ծածկություների հիմքը հանդիսանում է վայտի շրջանակը: Շրջանակի լայնությունը հավասար եւ խրամատի լայնության, լայնքը—մոտ 4 մետրե: Շրջանակը դարսվում եմեկը մլուս կողքին խրամատի լերկարությամբ մի քանի միջանցներով: Շրջանակը ներկում են պաշտպանողական գույնով: Շրջանակին ամրացնում են ցանցեր, վորոնց միջում հուտուում են քողարկիչ նյութ: Եթե ցանցեր չկան, նրանց փոխարինում եւ մետաղալարը: Շրջանակի լետեվի մասը մերքերով ամրացվում եւ անշարժ ձողերին, վորոնք դրված են լետեկի հողաթմբի լերկարությամբ: Շրջանակի առջիի մամն ազատ ընկած ե հողաթմբի բարձրության վրա: Հրաձգության ժամանակ շրջանակը նեցուկի ոգնությամբ մի քիչ բարձրացվում կամ բոլորովին դեն եւ գցվում (նկ. 12 և 13): Խրամուղիների մի քանի տեղամասերն են միան հարմարեցվում պաշտպանության համար: Մնացած տեղերը ծածկութը բո-

լորովին ծածկում և խրամուղիները վերեկից:

Անշարժ ծածկութիների կազմությունը հասարակ է: Խրամուղիների յերկու կողմում խփում են ցցեր և նրանց վրա գցվում և ցանց, վորում ներհուսում են քողարկման նյութը (Նկ. 14) Մի քանի տեղերում անհրաժեշտ է դնել շարժական ծածկութիներ խրամուղիներից դուրս գալու համար:



Նկ. 14. Խրամուղիների ծածկութի:


Վերերկրյա դիտողը, բացի պատվարից, տեսնում է հրակնատները: Հրակնատները — այդ պատվարի միջի այն անցքերն են, վորոնց միջից մարտիկը հրաձում է: Նրանք հեռվից պարզ նկատելի լին ու ճեղքերի ձևով: Նրանց ծածկե-

րու համար պատրաստվում են հրակնատների ձեռվկ շրջանակներ: Շրջանակները ծածկվում են քողարկման նյութով պատվարի գույնի: Յերբ մարտիկները չեն կրակում, շրջանակները ցած են թողնում և ծածկում են հրակնատները: Հրածգության ժամանակ շրջանակները բարձրացնում են պատվարի վերեկից գնացող մետաղալրի ոգնությամբ:

Գնդացրների, սմբանեաների և ականանեաների բները բողարկվում են, ճիշտ այնպես, ինչպես խրամաները:

2) Արվեստական խոչընդունելի քողարկումը: Արվեստական խոչընդուները հակառակորդին կանգնեցնում են խրամատի տառաջին: Ռւստի և անհրաժեշտ ե, վորպեսզի հակառակորդը դրանի ժամանակ հանկարծակի գետլինի խոչընդուներին, իսկ գրա համար անհրաժեշտ ե խնամքով բողարկել նրանց: Հարմար տեղանքում խոչընդուները կարելի յե դասավորել այն ձեռվ, վորպեսզի նրանք ծածկված լինեն հակառակորդի խրամաների առջևի ձորակում: Ծալքահեղ գեպը ում խոչընդուների համար կարելի յե վորել արվեստական փոս (Նկ. 15):

Լավ ե, խոչընդուները տեղավորել թփերում, ցանած արտերի մեջ, բարձր բուսած խոտում: Բատ հնարավորության դնում են ցածլիկ խոչընդուներ, թաքցնելով նրանց խոտի մեջ:



Նկ. 15 Արվեստական խոչընդուաների քողարկումը:

Խոչընդուաների տեխնիքական քողարկումը կայանում է ցցերի տեղանքի գույնով ներկելու, քողարկներ գործածելու, կեղծ խոչընդուաներ կառուցելու մեջ: Կեղծ խոչընդուաները սարքվում են առանց մետաղալարի միայն ցցեր խփելու միջոցով, վորովհետեւվ հակառակորդը միանուն և մետաղալարը չի տեսնում: Այդ բանը խարում է հակառակորդին և ստիպում է նրան անտեղի արկեր ծախսել:

3) Կեղծ խրամաներ և խրամուղիներ. Մենք արդեն ասեցինք վոր քողարկումը կայանում է վոչ միայն նրանում, վոր թշնամուց ծածկեն ան բոլորն ինչ վոր գոլութլուն ունի, ծածկվածի փոխարեն նա պետք թշնամուն ցուց տա այն ինչ իրոք չկա: Յեթե թշնամին չ' գտնի վոչ զորքեր, վոչ խրամաներ, վոչ հրանոթներ, իսկ մեր զորքերը չգիտես վորտեղից վորտեղ կ'սկսեն կրակել, նա նորից կսկսի իր վորոնումներն և, վերջապես,

կ'գտնի մեր մարտիկներին: Նշանակում ե իսկական խրամաների և հրանոթների փոխարեն պետք ե թշնամուն ցուց տալ կեղծերը: Նա անտեղի արկեր կծախսի և մի առ ժամանակ հանգիստ կթողնի իսկական խրամաներն ու հրանոթները:

Կեղծ խրամաներն և խրամուղիները շինվում են յերկու տեսակ. կամ փորում են խրամաներ և խրամուղիներ, բայց վոչ լրիվ խորությումը (10-20 սմ) կամ սև ներկով նկարում են անդամաքում խրամատի փոսն և խրամուղիները:

Մի քանի սանտիմետր փորելուց հետո կեղծ խրամատի փոսի հատակը ներկում են մրով: Իսկնամթիռից դիտելիս խրամատի փոսը բավականին խոր կ'յերեվա: Նույնն անում են և խրամուղիներում, ներկելիս խրամաներ և խրամուղիներում չեն փորում: Տեղանքում ծրագիներ բոլորովին չեն փորում: Տեղանքում ծրագիներ և խրամուղիներ և ապա գծում են խրամաները և խրամուղիները, և ապա այն շերտը, վորը պատկերացնում է փոսը ներկում են սև գույնով, իսկ հողաթումըը պատկերացնող շերտերը պայծառ ներկերի գույնով, վորը ված հողի գույնով: Չնի միջի փոսը ներկում են մուգ գույնով (այդպես ել պետք ե լիներ իսկապես), իսկ հողաթմբերն ավելի պայծառ գույնով: Կեղծ խրամաների և խրամուղիների ներկումը կատարվում է մեզ արդեն ծանոթ ներկացանի ողնությամբ (Նկ. 11):

Կեղծ խրամատը, խրամուղիներն և արվեստական խոչնդուսները կարող են ըեշտությամբ խարել և պահպանել իսկական կառուցվածքները:

4) Դիտողի բողարկօւմը պատճենության մեջ: Պաշտպանողական մարտում զորքերը լերբեմն լերկար ժամանակ կանգնում են մի տեղում: Ուստի և դիտողներին կարելի լե ավելի լավ քողարկել, քան հարձակողական մարտում:

Չեռքի տակ լեզած նյութից շինում են առարկաներ, իսկականներին նման, և նրանց մեջ նստեցնում են դիտողին, Այդ տեսակ արվեստական առարկաները կրում են քանդակագործական մակեաններ անունը:

Մակեանները լերբեմն իրենք զորքերն են շինում, լերբեմն ել պատրաստում են թիկունքում: Մակեանների ամենից շատ գործածական տեսակներն են՝ կեղծ կոճղերը, վարելահողերը, գերեզմանները, խոտի դեզերը, ձիու դիակը:


Կեղծ կոճղը շինում են մետաղալարի հիմքի վրա. այսպես կոչված կարկասի (կմախքի) վրա (նկ. 16):

Կարկասը պատում են իսկական կոճղից հանած ծառի կեղեռի: Հակառակորդի հեռու տարածության վրա լեզած դեպքում կեղեք կարելի լե փոխարինել ներկած կտավով, մեշոքով, խսիրով: Դեպի կեղծ կոճղը տանումեն թաքցրած խը-

րամուղի: Այդ տեսակ խրամուղիները տանում են և դեպի բոլոր կեղծ առարկաները:

Դրա հման շինում են կեղծ ծառեր և քարեր, թարերը լերբեմն սարքում են փայտե կարկասի վրա:

Գերեզմանի մակեանը կազմված է խաչից և գերեզմանի թմբից: Խաչի մեջը դատարկ է դիտելու գործիք՝ շրջապիտակը տեղափողելու համար, շինված է փայտից: Գերեզմանի բլրակը շինված



Նկ. 16. Դիտողը կեղծ կոճղում:

և փայտից և ծածկված է ներկած նյութով՝ ձիմով, հողով (նկ. 17):

Քանդակագործական — մակեաններով սովորա-

բար փոխարինում են իսկական առարկաները: Փոխարինումը կատարվում է զիշերը: Յեթե հակառակորդը չի դիտում, կարելի յէ մակեար դնել և նոր տեղում:

Դիտողին գեանից բարձր նստացնելու համար շինուած են մակեաներ խոտի կեղծ գեղերի ձևով: Զողերից շինած կարկասը ծածկում են գորդ—քողարկով կամ համապատասխան ձեռքի տակ լեզած նյութով ներհուսված ցանցերով: Յերբեմն խոտի դեղ մակեար սարքուն են մինչև կեսը, ընդ վորում սարբում են դեպի հակառակորդն ուղղված դեղի կեսը (Նկ. 18):

Մակեաների պատրաստման բոլոր աշխատանքները բավական բարդ են: Մակեաների պատրաստելը սովորաբար հանձնում են մասնագետներին—սակրավոր (սապլորներին) — քողարկիչներին:

ՀՐԵՏԱՆՈՒ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ


Հրետանին—կովի մեջ հետևակի առաջին մարտական ողնականն է: Իր կրակով նա հետևակի համար ճանապարհ է բաց անում: Հրետանին սովորաբար հրածկում է ծածկված զիշերից: Հրանոթներն այն ձևով են դասավորվում, վոր ձիգի ժամանակ թե հրանոթն և թե կրակը


հակառակորդի համար նկատելի չլինեն: Այդ ժամանակ հակառակորդի վերերկրյա զիտողը չի տեսնում մեր հրետանին: Բայց մեր մարտկոցները վինտուելու համար բարձրանում ե կապավոր բնուուելու համար բարձրանում է կապավոր բողարկել հրետանին:

Հրետանում բոլոր հրանոթները ներկում են պաշտպանողական գունդով: Կամ կամուֆլաժական ներկվածքով (Նկ. 19): Հրանոթների համար ընարում են թարնված տեղեր, տեղանքի մեծ ծալքերի, տիեզերում, անտառում, դյուզում, թփուտում:

Յեթե տեղանքում պահանջված ծածկաբանները չկան, այդ դեպքում նկ. 17. կեղծ գերեզմանը կամն, այլ դեպքում մասին մենք կիսուողարկներ են դնում, փորոնց մասին մենք կիսուունք հետո:

Հրետանին անտառում լավ ե քողարկվում: Հրանոթները դնում են անտառի հենց ծալքին, և քողարկում են կանաչներով: Բայց տեղում






Նկ. 18. Խոտի կեղծ գեղ.

Թնդանոթների չորս կողմը թփեր են տնկում, գետնի մեջ խրում են ծառի ճյուղեր, յերբեմն հրանոթները ծածկում են ցանց քողարկներով (ներկած կեղևաթելերը ներհյուսում են լարանից գործած ցանցում՝) ձողերից շինած կմախրի վերից։ Հրանոթների հետ միասին քողարկում են քարշակներն և ուժարկները։

Մարտկոցի տեղն զգալի կերպով մատնում են գեղի հրանոթներն անցկացրած կածանները։ Մար-




Նկ. 19. Հրանոթի կամուֆլաժական ներկվածք.

տիկների գեղի մարտկոցները շարժման համար սահմանել վորոշ կարգ։ Պետք է գնալ ծառերի և թփերի միջով, ցանկապատերի յերկարությամբ, սահմաններով, առուներով։ Նոր շավիդները ժամանակ առ ժամանակ վոչնչացնել նորից վորել, ծածկել ճյուղերով, ձնով։

Յեթե գեղի մարտկոցն անց է կացրած նոր շավիդ, պետք է այն անցկացնել մարտկոցի մուշավիդ, պա կիսարի հակառակորդին։ Լավ է մարտկոցները տեղափորել ճանապարհի մոտ, այլ գեղի կոցները տեղափորել ճանապարհի մոտ, առաջ իրում կածանների քողարկման հոգմն ինքն իրեն ընկնում ե:

Հրաձգության միջոցին պետք է քողարկել ձիգի վերև բարձրացրած փոշին։ Դրա համար հրանոթի բերանի առջևում շաղ են տալիս ջուր, նավթ, ներկ, կամ տախտակում են տեղանքի

գույնի մետաղե թերթիկներով։ Տևական հրածգության միջոցին թնդանոթի բերանի առջևում կազմվում ե վորոշ ծխի հետք։ Պետք ե այդ բառը ցըել, ներկել, վորև ե բանով քաղարկել։ Ինք-



Նկ. 20. Կեղծ հրանոթ ձիմից.

նաթիւը լերեալու ժամանակ հրանոթների հրածգությունն ըստ հնարավորության դադարեցնում են։

Իսկական մարտկոցը թշնամուց թափցնելով, հարկավոր ե նրան ցուց տալ կեղծը։ Կեղծ թնդանոթները շինում են ճիմից կամ ծառից։ Ճիմից շինած հրանոթն ավելի քիչ զործնական ե, քան ծառից շինած հրանոթը։ Ճիմերի մի շաբարսում են մեկը մյուսի մոտ, շինում են հրանոթի բունը։ Վահանը պատրաստում են ձողե-

րից։ Յերբ հրանոթը պատրաստ ե, ներկում են պաշտպանողական գույնով կամ կամուֆլաժական ներկվածքով (Նկ. 20)։ Փալտե հրանոթի կառուցվածքն ավելի բարդ ե, սակայն նա ավելի նման է իսկականին և դիմանում ե լերկար։ Հրանոթի կողքին կառուցում են կեղծ ոմբարկղ (Նկ. 21)։



Նկ. 21. Կեղծ հրանոթ ծառից շինած ոմբարկղով.


Հրանոթի համար վորում են կեղծ խրանատ։ Հակառակորդին ամբողջովին խարելու համար սարքում են կեղծ վոթոցներ։ Ճիգեր։ Վոթոցներ (բռնկոց) (և ճիգեր) սարքելու համար փամփուշներն ստանում են պատրաստ ձևով։ Մի փամփուշի պակթյունը նման է իր ձախով և բռնկոցով շնմմ հրանոթի ճիգին։

Փամփուշտների պալթյունները կատարվում են պահմանված կարգով, վորպեսզի հակառակորդի մոտ հրաձգող մարտկոցի տպավորություն ստեղծվի:

Կեղծ մարտկոցը կեղծ ձիգերով ամենալավ կերպով խարուժ է թշնամուն:

ԶՐԱՀԱՎՈՐ ՈՒԺԵՐԻ ՅԵՎ ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԻ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ

Հետեակի համար հեշտ և մարտ մղել զրապատների և տանկերի ողնությամբ: Պողպատեն




Նկ. 22. Զրահապատը կամոֆլաջական ներկվածքում.

Հրեները վոչնչացնում են թշնամուն, սարսափ են առածում նրա վրա, և հետեակին զրանից հետո ըիշ աշխատանք է մնում: Այդ պատճառով

թշնամին իր հրետանական կրակի ամբողջ ուժը դարձնում է մեր զրահապատների և տանկերի վրա, իսկ այդ տեսակ աճուելի մեքենաները թաքցնելն այնքան ել հեշտ չեն փոքր առվում տանեկը չեն կարող թաքցնել: Ամենից առաջ տանկերը, զրահապատներն և զրահապատ զնացքները ներկում են պաշտպանողական զունով կամ կամուֆլաժական ներկվածքով (Նկ. 22): Ապա տանկերի դրոհը, և յերեմին ել զրահապատներինը, մղվում է մթության և մառախուղի պաշտպանության տակ: Շատ լավ է տանկերի գրոհը քողարկել ծխածածկություն: Վերջապես, և տանկերը, և զրահապատները, և զրահապատ զնացքները պետք է վորքան հնարյավոր և հարմարվեն տեղանքին: Տանկերը զնումեն թփուաներով, հակառակորդից ծածկած ծորակներով: Զրահապատն ընտրում ե թշնամուց ծածկված ճանապարհ: Զրահագնացքը հրաձության համար կանգ և առնում այն մասում, վորտեղ յերկաթուղու գիծը վորորվում է, անցնում և անտառով կամ յերբ գիծը փակված և ծառերով կամ բարձր թփերով: Միայն այն ժամանակ կարելի լի հույս գնել զրահավոր մասերի ողնության վրա, իեթե հաջողվի նրանց մոտենության վրա, իեթե հաջողվի նրանց մոտենության մարտի դաշտին մինչև անմիջապես թշնացընել մարտի դաշտին հանդիպելը:

Ինենարիոները բողարկելու համար ներկում




Նկ. 23. Ինքնաթիռը կամուֆլաժական ներկվածքում:
Են կամուֆլաժական ներկվածքով ավելի ուղիղ
բծերով (Նկ. 23).

Ինքնաթիռը թշնամուց թաքցնելը շատ դժվար է, փորովհետև ողում կարելի յե քողարկվել միայն ամպերով: Այժմ ինքնաթիռներն սկսում են կիրառել սեփական ծխածածկույթներ:

ԹԻԿՈՒՆՔԻ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ

Պետք է քողարկել վոչ միայն ճակատում, այլ և թիկունքում: Գումակները քողարկվում են սաղերի ներկվածքով պաշտպանողական գումանով, կամաչով, տեղանքին հարժարվելով




Նկ. 24. Ճակատաբնի քողարկումը.

Անտառում թաքնվելով: Թշնամուց պետք է թաքնել զորքերի համար պարեն և արկեր կլի-
լը: Դրա համար պետք է քողարկել ճանապարհը
այսպես կոչված ուղղաձիո քողարկման ոգնու-
թյանը (Նկ. 24):

Քողարկները սովորաբար պատրաստում են
գորգ-քողարկներից (ցանցեր վորոնցում ներհնուս-
ված են կեղևաթելերը - մաշալկաները), վորոնք
ված են բարձր ձողերի վրա: Յերբ հակառա-
գրված են բարձր ձողերի վրա: Յերբ հակառա-
գրվել գետնից դիտում ե այդ տեսակ ճանա-
կորդը գետնից դիտում ե թե վերջինս ամբողջովին
պարհը, սրան թվում ե թե վերջինս ամբողջովին

Նրա գեղի հակառակորդը մոտիկ յեղած կողմը
քողարկում են: Քողարկները կասուցվում են
կամ հրուսած ցանցերից, կամ ձողերից, կամ,



Նկ. 25. Թուփ—քողարկ:

վերջապես մետաղալարերից ներհյուսված քո-
ղարկման նյութով. ծառերի ճյուղքերով, խոփ-
փոփ, կեղևաթելերի խրձիկներով (Նկ. 25):

Հակառակորդն այդ տեսակ քողարկը տես-
նում է, բայց նա չի տեսնում այն, ինչ նրա
յետեւմ տեղի յեւ ունենում:

Հրածգել ամբողջ քողարկը—արկերի անո-
դուտ ծախսում է: Հաճախ քողարկները զրվուր
են մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Այդ
տեսակ քողարկներով կարելի յեւ ծածկել հրետա-
նին, յեթե տեղանքում ծածկված դիրքեր չկան:

ՊԱՇՊԱՆԻՐ ՌԱԶՄԱԿԱՆ ԳԱՂՏՆԵՔԸ

Ռազմական գաղտնիք պահպանելը—քողարկ-
ման կարեոր միջոցներից մեկն ե: Մարտիկին
այդ բանը սովորեցնում են գեռևս խաղաղ ժամա-
նակ, վորովհետև թշնամին դեռ այն ժամանակից
հետեւում ե մարտիկներին:

Պատերազմի ժամանակ հակառակորդի դի-
տողությունն ավելանում է բազմիցս անգամ:
Հակառակորդի գործակալները, տեղական բնա-
կիչների շորեր հագած, իսկ յերբեմն և մեր զին-
վորական տարազը, ականջ են զնում ամեն մի
քայլափոխում, ինչ վոր խոսում են մարտիկները:
Նրանք աշխատում են խմանալ, ինչ զորամաս ե
անցնում; Նրանում վորքան մարտիկներ, գնդացը-
րեր, թնգանութներ կան, ովքեր են նրանց հրամա-
տարները, մարտիկներն ուր են զնում, ինչպես
ե նրանց արամագրությունը: Այն մարտիկը, վո-
ր չի կարողանում յեզուն իրեն պահել, հեշտու-
թյամբ կարող է զիմից գուրս տալ և գրանով
խորակել վոչ միայն իրեն, այլ և իր ընկերնե-
րին: Մարտիկը վորպես կանոն վոչ վորի հետ
չպիտի խոսի վոչ մի բառ զինվորական գործերի
մասին: Յեթե խոսում ես ընկերություն հետ, այդ դեպ-
քումնել պետք է չորս կողմղ նայես, արդյոք թրշ-
նամին ականջ չի զնում: Այն բոլոր կառկածելլ

մարդկանց, վորոնք մարտիկներից վորեւ բան են
հարցնում, հավաքել և ուղարկել զորամասի շտա-
րը կամ առաջնորդել իր հրամատարի մոտ: Գլո-
խից դուրս տվող ընկերոջը պետք է անմիջապես
«փեշից» քաշել բացագրել նրան ուղմական գոր-
ծերի մասին խոսակցություն անթուլատրելիու-
թյունը:

Բայց քո լուրիտնը—այդ դեռ քիչ եւ: Պետք է
աշխատել հակառակորդի մասին ավելի տեղեկու-
թյուններ խնանալ: Այն բոլոր հետաքրքիր բանե-
րն ինչ վոր մարտիկն խնանում եւ, խսկուն հա-
ղորդում է իր մերձավոր պետին: Յեվ վերջա-
պես ինքը մարտիկը, պետերի կարգադրությամբ
տարածում է կեղծ լուրեր իր զորամասի մասին:
Հակառակորդի գործականերն այդ լուրերը կհա-
ղորդեն թշնամուն և այդ բանը նրան կիսաբիւ-
Մտավոր մեծ կարողություն և խորամանկու-
թյուն է հարկավոր այդ դեպքում: Պետք է այն-
պես պատմել, վոր հակառակորդի գործակաները
գլխի չընկնեն այն բանում, վոր սուտ լուրեր են
տարածում: Այդ բանն ինչպես անել, այդ մասին
վոչ մի գրքուկում չես կարող կարդալ—ճարտար
մարտիկն ինքը պետք է հասկանա, թե այդ բա-
նըն ինչպես լավ կերպով անել: Խոկ նրանից հա-
կառակորդը վորեւ բան շուտով չի խնանա: Լոիր
ու մասին, իմացի՛ր հակառակորդի սասին—ահա

թե ինչպես պետք է գործի լուրաքանչյուր մարտիկ
պատերազմում:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ:

Սիօն մենք գիտենք, թե ինչ բան է քողար-
կումը: Դա թշնամուց հասարակ ձեռվ ծածկվել
չե: Ծածկվում է մարտիկը, ծածկվում են հրա-
նոթները, գնդացրերը, տանկերը: Սակայն այդ-
բոլորը, քողարկված լինելով, կատարում են ի-
րենց մարտական խնդիրը: Մարտիկը հարձակ-
վում է, հրետանին հրածգում է, տանկերն և
զրահապատճերը գնում են զբո՞ի:

Քողարկումը միայն ծածկվելը չե: Թշնամուն-
պետք է ցույց տալ և այն, ինչ իսկապես չկա-
դրանք համար սարքում են կեղծ խրամատներ,
հրանոթներ, արվեստական խոշընդուներ, տա-
րածում են սուտ լուրեր: Հակառակորդին ամեն մի
անգամ խաբելը, վորն ոգնումեամբարտիկին կատարել
նրա մարտական խնդիրը, կոչվում է քողարկում:

Լավ քողարկման համար մենակ մտավոր ու-
նակությունը քիչ է: Պետք է վոչ միայն քողարկ-
ման զիսավոր յեղանակներն խնանալ, այլ և կա-
րողանալ նրանց կիրառել գործնականում: Միայն
այն ժամանակ զրանք մարտիկի զիսում տեղ կը
գտնեն, վորը պետք է մշտական հիշի այն մասին,

ԱՅՍՏԱԿԱՆ ՀԵԿԱՆԱԿԱՆ ՎՐԱ ԱՅՍՏԱԿԱՆ ՀԵԿԱՆԱԿԱՆ
ՀԵԿԱՆԱԿԱՆ ՎՐԱ

Գոր սրան հետևում են թշնամական հազարավոր
աշքեր: Հետևում են ցերեկը, հետևում են գիշե-
րը, հետևում են ամեն տեսակ լեզանակին:

Ուստի և ամեն մեկը պետք է մտածի քո-
ղարկման մասին ամեն տեղ և մշտապես, և այն
ժամանակ միայն հեշտ է դառնալ լավ բողարիչ:





345 =

ԳԻՒԾ 15 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0217916

41.604